

## Համագործակցություն Սկոլկովո ինովացիոն կենտրոնի և ՀՊՏՀ-ի միջև. հիմքում գիտաուսումնական խմբի գործունեությունն է

ՀՊՏՀ «Ազգային ինովացիոն համակարգ» գիտաուսումնական խումբը երեկ մասնակցել է Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի՝ Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի աջակցությամբ կազմակերպված «Նորամուծությունների առևտրայնացման մեխանիզմները Սկոլկովո ինովացիոն կենտրոնում» սեմինար-քննարկմանը: Այս մասին մեզ տեղեկացրեց նշված խմբի ղեկավար, ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ղեկան Ատոմ Մարգարյանը:

Սկոլկովոյի բաց համալսարանի գործադիր տնօրենի տեղակալ Եկատերինա Մոռոզովան ներկայացրել է ՌԴ ինովացիոն համակարգը, «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնը, նորամուծությունների առևտրայնացման փորձն ու ինովացիոն գործունեության ոլորտում երիտասարդ գիտնականների հետ տարվող աշխատանքները, թե ինչ փուլերով է անցել կենտրոնն իր ձևավորման ճանապահին:

Եկատերինա Մոռոզովան նշել է, որ ինովացիոն ոլորտի զարգացման ուղին ՌԴ-ում սկսել են նախ բուհերում փոփոխություններ իրականացնելով՝ կարևորելով մագիստրոսական ծրագրերում «Ձեռներեցության հիմունքներ» դասընթացը: Նա հավելել է, որ իրենց երկրում չափազանց կարևոր տեղ է զբաղեցնում մտավոր սեփականության իրավական պաշտպանությունը, որը ևս դարձել է մագիստրոսական դասավանդման հիմնական դասընթաց:

Սեմինար-քննարկումը ընթացել է ակտիվ հարցադրումներով և քննարկումներով: Ատոմ Մարգարյանը հնչեցրեցրել է մի շարք հարցեր ու նկատառումներ, որոնք առնչվում էին ինովացիոն նախագծերի արդյունավետության գնահատման, դրանցում դեպի արտասահման հեռացած երիտասարդ, տաղանդավոր գիտնականների ներգրավման, կիրառական էլքի ներուժ ունեցող նորամուծությունների ֆինանսավորման հնարավորություններին: Դիտարկումներ են կատարվել նաև Հայաստանում Սկոլկովո նախագծի առավել ուշագրավ ու արդյունավետ բաղադրիչների տեղայնացման հնարավորությունների շուրջ:

Քննարկման ընթացքում հստակեցվել են այն սեմինարների և դասընթացների ուղղություններն ու թեմատիկան, որոնք նախատեսվում է անցկացնել Հայաստանում՝ Սկոլկովոյի բաց համալսարանի առաջատար մասնագետների կողմից: Ըստ նախատեսվածի, այն կմեկնարկի այս աշնանը և հայ երիտասարդ գիտնականների համար հնարավորություն կստեղծի ստանալու լրացուցիչ գիտելիքներ նորամուծական ոլորտում: Սկոլկովոյի բաց համալսարանի փոխտնօրենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել դասախոսությունների ու սեմինարների շարք կազմակերպել նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Ատոմ Մարգարյանի և Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրեն Գևորգ Վարդանյանի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել նորաստեղծությունների մշակման ու առևտրայնացման տարաբնույթ ծրագրերի շուրջ ձևավորել համագործակցության ընդհանուր օրակարգ ու դրանցում ներգրավել ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան շահագրգիռ սուբյեկտների:

ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ զրույցում Ատոմ Մարգարյանը ընդգծեց, որ գիտաուսումնական խմբի մասնակցությունը սեմինարին բավականին արդյունավետ էր, և այն հիմք է հանդիսացել բուհի և կենտրոնի միջև համագործակցության ձևավորմանը:

#### ՀՊՏՀ Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժի

<http://www.asue.am/am/%D5%B4%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1/%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-143/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%BD%D5%AF%D5%B8%D5%AC%D5%AF%D5%B8%D5%BE%D5%B8-%D5%AB%D5%B6%D5%B8%D5%BE%D5%A1%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6%D5%AB-%D6%87-%D5%B0%D5%BA%D5%BF%D5%B0-%D5%AB-%D5%B4%D5%AB%D5%BB%D6%87-%D5%B0%D5%AB%D5%B4%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A5%D6%80%D5%AB->

[%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6-%D5%A7-1957](#)